

XIX ԴԱՐԻ ՀԱՅ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԼԻԼԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայ բառարանագրության պատմության մեջ՝ իրենց հաստատուն տեղն են գրավում հայ-անգլերեն բառարանները: Անգլերեն-հայերեն առաջին բառարանը, որի հեղինակն է Մ. Սիմեոնյանը, լույս է տեսել Մադրասում²: Բառարանը փոքրածավալ է, պարունակում է ընդամենը 5000 բառահոգված: Քանի որ այն առաջին փորձն էր և հետապնդում էր գործնական նպատակներ, ուստի հասկանալի է նրա ծավալի փոքրությունը և թերությունների անխուսափելիությունը: Բառարանը սկսվում է Աստված, Սուրբ հոգի, Սուրբ Հիսուս Քրիստոս, Սուրբ երեւոյդոքուն, Հայր, Որդի, Ստեղծող, Փրկիչ, Ազատիչ, Դրախտ և նման կրոնական բառերով (38 բառ): Այնուհետև տրվում են բառացանկեր ըստ տարբեր թեմաների՝ «Հաղագս տարրերաց» (4 բառ), «Հաղագս աստեղաց» (35 բառ), «Հաղագս ժամանակի» (32 բառ), «Հաղագս ավուրց շաբաթու» (7 բառ) և այլն:

Յուրաքանչյուր բաժինը ներկայացված է հանգամանորեն: Օրինակ՝ «Հաղագս պտղոց և պտղատու ծառոց» բաժնում բերված են՝ պտուղ, ծառ, բույս, աստունացյալ պտուղ, խնձոր, խնձորենի, տանձ, տանձենի, կեռաս, կեռառենի, շուր, շուրենի, նուշ, բալ, գետնախնձոր, բան նալիս, նշենի, ծիրան, ձիրանենի, դեղձ, դեղձենի, կոկոն, բուզ, թզենի, շագանակ, շագանակենի, բնկույզ, բնկուզենի, կաղին, կաղնի, նուռ, նոռենի, սերկեխ, սերկեխի ծառ, աճաճաս, վարդախնձոր, գլյար, գլյարենի, նարինջ, նարնջենի, լեմոն, լեմոնենի, կիտրոն, կիտրոնենի, արմավ, արմավենի, ձիթապտուղ, ձիթենի, խաղող, որթ, եղջուր, եղջերենի, թուր, դափնի բառերն իրենց անգլերեն հոմանիշներով: Հստ էության այս բաժինը մի փոքրիկ թեմատիկ բառարան է: Այնուհետև սկսվում է բուն բառարանը, որն ունի այբբենական դասավորություն: Բառարանի ընդհանուր բաժնում և բուն բառարանում եղած բառերը գրեթե նույնն են, միայն բացակայում են քերականական նշումները: Հեղինակը բառերի հոմանիշներն իրարից անջատել է ստորակետերով, նաև կամ բառով, իսկ տարբեր իմաստները՝ միջակետերով կամ էլ ևս բառով:

Ridiculous — ծանակելի կամ ծաղրելի:

Domestic — տնային, ընտանի:

Corner — խորշ. անկյուն:

Virtuous — առաքինի ևս գորավոր:

1 Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968: Հայ-անգլերեն բառարանագրության տակ պետք է հասկանալ հայ-անգլերեն և անգլերեն-հայերեն բառարանները:

2 Մ. Սիմեոնյան, Փոքրիկ բառգիրք անգղիացոց լեզուի թարգմանյալի հայ բառերով, Մադրաս, 1803:

Գրական ձևերի կողքին որոշ դեպքերում, որպես հոմանիշ, շեղագրով բերված են բարբառային և ժողովրդական բառաձևերի համապատասխանությունները: Օրինակ՝

The kidney — երիկամն, պլոնիկ:

Squint — շիւ, շոլդիկ:

Dumb — համբ, լալ:

Մկրտում Միմենյանի բառարանը, բնականաբար, երկար ժամանակ չէր կարող բավարարել ուսումնասիր խավերի օրավուր աճող պահանջները: Անհրաժեշտ էր կազմել ավելի հարուստ և ընդարձակ բառարան: Այդ գործը իրականացրեց Հարություն Ավգերյանը: Հ. Ավգերյանի անդլերեն-հայերեն բառարանը՝ հրատարակվել է Վենետիկում, 1868 թ., հեղինակի մահվանից հետո, այն վերահրատարակվել է Մադաթիա Պետրոսյանի վերամշակմամբ ու խմբագրությամբ:

Բառարանի առաջաբանում հեղինակը ընդգծում է, որ իր ժամանակի եվրոպական լեզուների մեջ անգլերենը կարևոր տեղ է զբաղում և այդ լեզուն իմանալը խիստ անհրաժեշտ է գիտությամբ, արվեստով և վաճառականությամբ զբաղվողների համար: Անգլերեն բառացանկի համար Հ. Ավգերյանը օգտվել է Սամուել Զոնսոնի³ բառարանից: Հ. Ավգերյանի բառարանն ունի շուրջ 40000 բառահոդված: Այն կաղմված է այբբենական սկզբունքով, անգլերեն գլխաբառից հետո, փակագծերի մեջ տրվում է բառի արտասանությունը հայերեն տառադարձությամբ, նշվում խոսքի մասի պատկանելիությունը և ապա՝ հայերեն բացատրությունը: Որպես գլխաբառ հեղինակը բերում է կայուն կապակցություններ: Օրինակ՝

Candy Lion's foot — է բույս ինչ:

Cat's head — տեսակ ինչ խնձորո (կատվագլուխ):

Իբրև գլխաբառ տրվում են նաև բառական արժեք ունեցող հապավումները: Օրինակ՝ F. R. S.— են սկզբնատառք բառիցս fellow of the Royal Society այսինքն՝ անդամ թագավորական ընկերության:

Եթե բառն ունի կրկնակի գրություն կամ արտասանություն, հեղինակը բերում է երկու տարբերակներն էլ, առանց առաջնություն տալու որևէ ձևին: Օրինակ՝ Can (քաէն կամ քէն)—սկահ, բաժակ, ըմպանակ: Cat (քաէդ կամ քէդ)—կատու: Basso՛n կամ Basso՛on (պէսսուն)—նվագարան ինչ փշողական:

Տրվում են նաև անկանոն գոյականների եզակի կամ հոգնակի կամ էլ՝ անկանոն բայերի դերբայական ձևերը: Օրինակ՝ feet է հոգնականն բառիս foot:

Louse — (ի հոքնականն lice):

Laid — է անցյալ ընդունելություն բայիս to lay:

Get — է կատարյալ ժամանակ բայիս to get:

³ Հ. Ավգերյան, Բառարան անգլերեն և հայերեն, Վենետիկ, 1821:

⁴ Սամուել Զոնսոն (1709—1784), անգլիական բառարանագրության խոշորագույն ներկայացուցիչներից մեկը, որը 1755 թ. լույս է ընծայել անգլերեն լեզվի երկհատոր առաջին բացատրական բառարանը:

Փոխառու բառերի դիմաց հեղինակը նշում է փոխառության աղբյուրը: Օրինակ՝ Behemoth—(է բառ եբրայական)—գազան, փիղ, գետածի: Kirk—եկեղեցի (է բառ Սկովտիացվոց):

Տերմինների և տերմինային արժեք ունեցող բառերի դիմաց նշվում է նրանց գործածության ոլորտը: Օրինակ՝ Catalepsis—ըմբռնումն կամ ուշաբարձություն (ըստ բժշկաց):

Ignoramus—անստուգություն դատի (ըստ իրավագիտաց): Բառարանում հայերեն բացատրության հետ երբեմն տրվում են լրացուցիչ մեկնություններ: օրինակ՝

Narcotick — թմրեցուցիչ (դեղ):

To mute — ծրտել (թռչնոց):

Հեղինակը տարբերակում է նաև անգլերեն համանունները: Օրինակ՝

Dam — տէմ գ. մայր (անասնոց):

Dam — գ. թումբ կամ սահանք գետոց:

Bat — (պաէդ կամ պէդ) գ. բիր, գավազան:

Bat — գ. շիղջ, շիջիկն, շիջիկան:

Անգլերեն գլխաբառի համանշանակ հայերեն հոմանիշները միմյանցից անջատվում են ստորակետերով, բազմիմաստ բառերը՝ առաջին հրատարակության մեջ զատված են վերջակետերով, իսկ երկրորդ հրատարակությունում՝ միջակետերով:

Բառարանի արժանիքներից պետք է համարել այն, որ գլխաբառերի տակ կան դարձվածքներ և կայուն կապակցություններ, մի բան, որ բացակայում էր նախորդ՝ Մ. Սիմեոնյանի բառարանում: Օրինակ՝ hand գլխաբառի տակ կան հետևյալ դարձվածքները.

Hand over head — կույր զկուրացն, անխորհրդաբար, անզգուշս:

Hand to hand — բռնամարտիկ, բռնցի, հարկանելով միմյանց:

Hand in hand — կալյալ ձեռանե միմյանց, կից, ի միասին: Ի դեպ, վայելուչ:

Hand to mouth — առօրյա վարձ, ավուր պարեն:

To bear in hand — խաղ առնել, ՚ի սնոտիս հուսացուցանել, ՚ի դերե հանել:

To be hand and glove — լինել մտերիմ, բարեկամ, սիրելի լինել միմյանց, պատշաճիլ:

At hand կամ near hand — պատրաստ, ի պատրաստի: Հուպ, մերձ, մերձակա, մոտալուտ:

Հ. Ավգերյանի բառարանի սկզբում տրվում են անգլերենի արտասանության կանոնները, համառոտ քերականությունը, իսկ վերջում՝ հատուկ անունների ցանկը իգական և արական բաժիններով:

Բառարանի երկրորդ հրատարակությունը համեմատաբար հարուստ է: Գլխաբառերի մոտ տրված են ավելի շատ նշանակություններ, ճշտված են որոշ գլխաբառերի իմաստները, բերված են մեծ քանակությամբ դարձվածք-

* Այժմ հնացած:

ներ, Այսպես՝ Water գլխաբառի տակ կան water-carrier — ջրկիր, water-gage — ջրաչափ (գործիք), water-way — խողովակ ջրո, ջրէջք բառերը, որոնք բացակայում են առաջին հրատարակության մեջ, Բացի գրանից, եթե առաջին հրատարակության մեջ water-melon-ը բացատրված է բույս ինչ, ապա երկրորդ հրատարակության մեջ՝ ձմեռուկ: Ճշտված է նաև water-willow - ցուս — նի ջրային, բացատրությունը, որն առաջին հրատարակության մեջ գրված է՝ բույս ինչ:

Այսպիսով, Հ. Ավգերյանի բառարանը գիտական սկզբունքներով կազմված մեր առաջին անգլերեն-հայերեն բառարանն է, որ երկար տարիներ պտնվել է շրջանառության մեջ:

Վերահիշյալ բառարանի լույսընծայումից հետո Հ. Ավգերյանը ձեռնամուխ է լինում հրատարակելու իր հայ-անգլերեն բառարանը⁵, որը նույնաման բառարանների շարքում առաջինն է: Բառարանի համար հիմք են ծառայել հենց իր՝ Հ. Ավգերյանի հայ-ֆրանսերեն⁶ և Մխիթար Սեբաստացու Հին Հայկազյան⁷ բառարանները: Բառարանը լույս տեսավ 35000 բառահոգվածով: Հ. Ավգերյանը նշում է, որ առայժմ իր հայ-անգլերեն բառարանը պետք է բավարար համարել և միաժամանակ ավելացնում, որ երբ լույս տեսնի վենետիկյան նորագույն ու բազմաբովանդակ բառարանը (նոր Հայկազյան բառարանը), ապա հնարավոր կլինի հայերեն համապատասխան երկլեզվյան բառարաններ կազմել: Բերելով անգլերեն գլխաբառը, հեղինակը նշում է գոյականների սեռական և գործիական հոլովներն ու բայի սահմանական եղանակի ներկա և կատարյալ ժամանակները: Օրինակ՝ մարգարիտ (բտի, բտավ), մկան (ի, սու կամ մկամբ), գերել (եմ, եցի), նշանակել (եմ, եցի):

Անգլերեն նոտրգրով նշված է խոսքի մասը: Բառերի հոմանիշները միմյանցից զատված են ստորակետերով, իսկ տարբեր իմաստները՝ միջակետ-ստորակետով կամ էլ՝ երկու կետով: Օրինակ՝ պսակ (ի, աւ) CROWN, diadem; garland; circle; glory brim; frame edge: chaplet; chaplet of flowers: edge of a wall; cornice; parapet: coronation, achievemnet, accomplishment: marriage:

Բառարանում բազմաթիվ են հայերեն համանունները, որոնք հեղինակը ներկայացրել է առանձին գլխաբառերով: Օրինակ՝ Փռղ (ի, իւ) որպես շնչափռղ և փռղ (ռյ, ով) նվազելու գործիք: Դար (ու, ու) ժամանակի առումով և դար (ի, իւ) ոչ հարթ տեղ իմաստով:

Հ. Ավգերյանի բառարանը հարուստ է գլխաբառերի տակ բերված գարծվածքներով: Օրինակ՝ աչք բառի տակ բերված են՝ աչս առնակել, ըստ աչս դատել, յաչս դնել, առ աչս, առ աչս հայել, յաչաց հանել, յաչաց ելանել: դարձվածքներն իրենց անգլերեն համապատասխան ձևերով:

Դարձվածքներով հարուստ են նաև ակն, ոգի, հոգի, միտք, ուշ, հասնել, ելանել գլխաբառերը:

Բառարանի վերջում հեղինակը զետեղել է հատուկ և աշխարհագրական անունների ցանկեր:

⁵ Հ. Ավգերյան, Բառարան հայերեն և անգլիական, Վենետիկ, 1825:

⁶ Հ. Ավգերյան, Բառարան համառոտ ի հայ ի գաղղիական, Վենետիկ, 1817:

⁷ Մ. Սեբաստացի, Բառգիրք Հայկազյան լեզվի, հ. 1, Վենետիկ, 1749, հ. 2, Վենետիկ, 1869:

Անգլերեն-հայերեն հաջորդ բառարանը⁸ լույս ընծայեց Հովհաննես Ավդալանը, Բառարանն ունի այբբենական դասավորությամբ մոտ 10000 բառահոգված: Այն փաստորեն Հ. Ավգերյանի անգլերեն-հայերեն բառարանի համառոտագրությունն է: Այստեղ բացակայում են դարձվածքները և կայուն կապակցությունները, չի բերված անգլերեն գլխաբառի արտասանությունը հայերեն տառադարձությամբ: Հոմանիշները զատված են ստորակետերով, իսկ բազմիմաստությունները՝ վերջակետերով: Օրինակ՝ *vain* ած. սնտի, ունայն, զուր: Փառասեր, սնապարծ: անպիտան: Սուտ: Պատիր:

Հայերեն բացատրության մեջ որոշ դեպքերում տրված են լրացուցիչ մեկնություններ: Օրինակ՝ *weatherglass*—հողմաչափ կամ օդաչափ (ապակի): *Lancet*—նշտրակ (վիրաբույժի):

Հեղինակը երբեմն ներկայացնում է հայերեն բառի բարբառային—ժողովրդական անվանումները:

Saffron — քրքում (գֆրան):

Quicksilver — սնդիկ (միպակ):

Velvet — թավիշ (մախմուտ):

XIX դ. հրատարակվել են մի շարք առձեռն բառարաններ, որոնցից ուշադրով են Սուքիաս Սոմալյանի գործերը: Նրա գրչին են պատկանում «Բառհիրք համառոտ անգլիերեն-հայերեն» և «Բառգիրք համառոտ հայ-անգլիերեն» բառարանները⁹, որոնք հրատարակվել են 1835 թ.: Դրանք դպրոցական-ուսուցողական նպատակներով ստեղծված առձեռն բառարաններ են:

XIX դ. հրատարակվել են նաև մասնագիտական բառարաններ: 1865 թ. Պոլսում Ե. Մինասյանը հրատարակեց անգլերեն-հայերեն և հայ-անգլերեն աշխարհագրական բառարանը¹⁰ յուրաքանչյուր մասը 1800 բառահոգվածով:

Հայ-անգլերեն բառարանների շարքում կարևոր տեղ է գրավում Մադաթիա Պետրոսյանի հայ-անգլերեն բառարանը¹¹, որը պարունակում է 40000 բառահոգված: Ինչպես վկայում է ինքը հեղինակը, նա ձեռնարկել է կազմելու ուսյն բառարանը՝ ընդառաջելով տարբեր անձանց կողմից ստացված խնդրանքներին: Բառարանի առաջաբանում Մ. Պետրոսյանը նշում է, որ հայերի մեջ ֆրանսերենին առնչված շատ բառարաններ կային: Սակայն անգլերենը հայերի մեջ այդպիսի մեծ տարածում չունի: Հնդկահայ գաղութներում հայերենը աստիճանաբար մոռացվում էր և անհրաժեշտություն էր զգացվում նրանց համար հայերեն բառարան կազմելու: Անգլիացիների մեջ ևս մեծ հետաքրքրություն էր առաջացել ուսումնասիրելու հայոց լեզուն:

Սույն բառարանը կազմելիս Մ. Պետրոսյանը օգտագործել է Վենետիկում հրատարակված Առձեռն բառարանը¹², այնտեղից հանելով ավելորդ ու հնացած բառերը և ավելացնելով նոր բառեր: Օրինակ՝ ծով բառով Մ. Պետրոսյանը ունի ծովագալ (կենդ.), ծովագիր, ծովագրական, ծովագրավ (կենդ.),

⁸ Հ. Ավդալան, Բառարան անգլիերեն-հայերեն, Կալկաթա, 1825:

⁹ Ս. Սոմալյան, Բառգիրք համառոտ անգլիերեն-հայերեն, Վենետիկ, 1835: և ույնի, Բառգիրք համառոտ հայ-անգլիերեն, Վենետիկ, 1835:

¹⁰ Ե. Մինասյան, Անգլո-հայերեն և հայ-անգլերեն աշխարհագրական բառարան, Կ. Պոլիս, 1865:

¹¹ Մ. Պետրոսյան, Նոր բառգիրք հայ-անգլերեն, Վենետիկ, 1875—1879:

¹² Հ. Ավգերյան, Առձեռն բառարան Հայկազնեան լեզվի, Վենետիկ, 1846:

ծովախառնիճ (կենդ.), ծովալոռ (բուս.), ծովակալություն, ծովակաղին, ծովակոծ, ծովաճար, ծովաճեն, ծովաձի (կենդ.), ծովամամուռ (բուս.), ծովայնկույս, ծովաճույզ, ծովանամ, ծովանկար, ծովանցիկ, ծովաբույս (կենդ.), ծովափն, ծովափրփուր, ծովորոտ (կենդ.) բառերը և տերմինները, որոնք բացակայում են Առձեռն բառարանից:

Գավառական բառերը հեղինակը նշել է աստղանիշով: Օրինակ՝ թորիծ, բարք, շաք, սնչիկ, սնֆար, պրճուկ, պրուն, մուստառ, կլգտրուկ, նարգիլակ, նազուզ, շղպիֆ, շրառ, մամուկ, պիժիկ, պլուք, շետիկ, խխում, հրճհրճուկ, քարիս և այլ բառեր:

Մ. Պետրոսյանի բառարանում կան բազմաթիվ տերմիններ, որոնք հեղինակը առանձնացրել է: Օրինակ՝ մանիշ (քիմ.), նոխազիս (քիմ.), շնաֆաղց (բժ.), պրախ (բուս.), հարճուկ (բուս.), արեղուկ (կենդ.), նոպա (բժշկ.), մասնաշափ (աստղ.), միտաշափ (մեք.) և այլն:

Բառարանում հանդիպում են բավականաչափ փոխառյալ բառեր: Օրինակ՝ մելան (հուն.), պանթեո (հուն.), ազանովթ (եբր.), ադեն (եբր.), պալիուն (լատ.), պատրիկ (լատ.), շամս (պարսկ.), պակ (ֆրանս.) և այլն:

Հիշյալ բառարանում ներկայացված և ճիշտ դասակարգված են հայերեն համանունները: Օրինակ՝ կար—կարելու պրոցեսը և կար—ուժ իմաստով, նանդերձ—հագուստ և նանդերձ որպես կապ, նազար—թիվ, նազար որպես բույս և այլն:

Որոշ գլխաբառեր հարուստ են դարձվածքներով և կայուն կապակցություններով: Օրինակ՝ լեզու-ի տակ կան՝ լեզու ապիտյալ, լեզու աղտեղի (բժշկ.), լեզու կոշիկի, լեզու զանգակի, լեզու երկրի (աշխ.), նայ, անգղիական լեզու, լեզու զավառական, մայրենի լեզու, կենդանի, մեռյալ լեզու, ուսուցիչ լեզվաց, վարժապետ զաղղիական լեզվի, լեզու շար, սուտ, նենգավոր, լեզու անուշակ, մեղրակաթ, լեզու փաշ, վսեմ, և խոսել այլ և այլ լեզուս, լեզվի տալ, լեզվի գալ, արձակել, ձգել առ ոք զլեզու, լեզվո դրունս դնել, ունել զլեզուն, կարճել կամ սանձել լեզուն, մերձ ի ծայր լեզվին ունել, լեզուն ի փմս կցիլ. գաղստանալ լեզվի, անուկրե լեզու, այլ զոսկերս լեզու, որպիսի լեզու շաղակրատ, կարի փաշ փոխյաց զլեզու կապակցությունները և դարձվածքները:

Բառարանն ունի քերականական ժանոթագրություններ և հատուկ ու պատմական անունների ցանկեր:

XIX դ. վերջերին հրատարակված հաջորդ բառարանը Վ. Հակոբյանի անգլերեն-հայերեն բառարանն է¹³, որն ունեցել է երկու հրատարակություն: Առաջին անգամ այն լույս է տեսել Պոլսում, 1894 թ., վերահրատարակվել է նույնպես Պոլսում, 1907 թ.: Առաջին հրատարակությունը պարունակում է 25 հազար բառահոդված, իսկ երկրորդը՝ շուրջ 27 հազար:

Ինչպես վկայում է հեղինակը, այս բառարանի անհրաժեշտությունը բխում է գիտության և մշակույթի զարգացման պահանջից, քանի որ նախորդ անգլերեն-հայերեն բառարանները չունեին տերմինաբանական հստակ դասակարգում և ժամանակի առումով հնացած էին: Այդ բառարաններում տերմինները ներկայացված են հետևյալ կերպ. բույս ինչ, փառ ինչ, տունկ ինչ փշալից, որոնք գիտական մեկնաբանությունից հեռու են:

¹³ Վ. Հակոբյան, Բառարան անգլերենի ի հայ, I հրատ. Կ. Պոլիս, 1894, II հրատ. Կ. Պոլիս, 1907.

Իր բառարանում անգլերեն գլխաբառերի համար Վ. Հակոբյանը օգտվել է «Webster's Condensed» բառարանից, որը պարունակում է 55000-ից ավելի բառահոդված: Այստեղ հեղինակը հանդես է բերել ստեղծագործական ինքնուրույնություն: Շատ անգլերեն բառերի դիմաց նա ստեղծել է հայերեն համապատասխան հոմանիշներ:

Բառարանը կաղմված է բնային սիստեմով: Օրինակ՝ metal բառի տակ տրված են հետևյալ ածանցված ձևերը.

- ling — քարահատակում, խճահատակում (ուղիի);
- led — քարահատակ, խճահատակյալ (ճանապ);
- lic — մետաղյա, մետաղային; հանքային; մետաղանման;
- liferous — մետաղաբեր;
- liform — մետաղաձև, մետաղանման;
- lize — մետաղի դարձնել, մետաղացնել;
- lization — մետաղացում;
- list — մետաղագործ;
- lography — մետաղագրություն, մետաղագիտություն;
- loid — մետաղակերպ:

Բառարանի արժանիքներից պետք է համարել տերմինների առատ հոսքը, որոնցից շատերը բերված են առաջին անգամ: Օրինակ՝ morse—ծովափիղ (ձկ.), yas — ժողացավ (բժ.), linnet — կտավաքաղ (թռ.), arseniate — զառկատ (քիմ.), lysimachia — ոսկեղեգ (բու.), marry-bud — վաղեմնիկ (բու.) և այլն:

Հեղինակը առանձնացրել է նաև փոխառյալ բառերը. փոխառություններ կան ֆրանսերենից, իտալերենից, իսպաներենից, գերմաներենից, պարսկերենից և այլ լեզուներից: Օրինակ՝

- minne-singer — սիրերգակ (գերմ.);
- mirza — իշխան (պրսկ.);
- maestoso — մեծափառ, մեծավայելուչ, վսեմ (իտ.);
- alose — հարընգամայր (ֆր.);
- chaparral — կաղնուտ; անտառ (իսպ.):

Բացատրությունը ավելի հասկանալի դարձնելու նպատակով հայերեն բառերի մոտ հեղինակը երբեմն նշում է և թուրքերեն հոմանիշը:

- speck — արատ, բիծ, նիշ, լեֆե, պեֆեֆ;
- alose — հարընգամայր, գալակյոզ պալըղը:

Բազմիմաստ բառերը Վ. Հակոբյանը առաջին հրատարակության մեջ զատում է կետ-գծիկով, իսկ երկրորդում՝ արաբական թվանշաններով, որն արդեն նորություն է և մի քայլ առաջ նույնատիպ բառարանների պատմության մեջ:

Վ. Հակոբյանի բառարանում անգլերեն շատ համանուններ սխալ ձևով բերված են նույն գլխաբառի տակ, որպես բազմիմաստություն: Օրինակ՝ can, liver, saw, mass, ear գլխաբառերը:

Բառարանում կան որոշ թվով դարձվածքներ, կայուն կապակցություններ:

Bear (bore, born) զխաբառի տակ բերված են՝

To bear away, up — հովին բրթալ, քաշվիլ:

To bear back — հտ բրթալ:

To bear dale — թիվ կրել:

To bear down upon — մղել, վարել:

To bear down — ճնշել, ճզմել:

To bear a hand — օգնել, փութալ (նվ.):

To bear off — հեռանալ, քաշվիլ:

To bear on — օգնել, մղել, Առաջանալ:

To bear one's self — վարվիլ:

To bear out — համբերել, հաստատել:

To bear palm — հաղթական լինել:

To bear through — առաջնորդել, ուղղել:

To bear up — պաշտպանել:

To bear upon, to bear with — կրել, համբերել:

Բառարանի վերջում տրված է օտար բառերի և դարձվածքների ցանկ՝ իրենց հայերեն համանշանակներով: Օրինակ՝

Ad gloriam — ի փառս:

Terra firma — ցամաք (երկիր):

Terra incognita — անծանոթ երկիր:

Բերված է նաև հատուկ անունների ցանկ, տրված է դրանց ստուգաբանությունը և նշված, թե որ լեզվից է փոխառնված: Օրինակ՝ Rebecca—գեղափայլ, Ռեբեկա, Պերճուհի, փաղաքշական Becky (եբր.): Valentine—զորավոր, Վաղենտինոս (լատ.):

Անգլերեն-հայերեն այս բառարանի երկրորդ հրատարակությունն ավելի հարուստ է: Այնտեղ Վ. Հակոբյանը տալիս է ձայնավորների հնչման կանոնները, անդրադառնում է շեշտին և ածանցներին, բերում արիական լեզուների բաժանման ցանկը: Նորություն է նաև աշխատության վերջում անգլերեն հոմանիշների բառարանը: Երկրորդ հրատարակության մեջ հեղինակը ավելացրել է զգալի քանակությամբ նոր բառեր: Օրինակ՝ anthropo արմատով կան՝ Anthropography—մարդագրություն: Anthropologist—մարդաբան, մարդախոս: Anthropometry—մարդաչափություն: Anthropomorphite—Աստուծո մարդակերպության հավատացող, մարդակերպյան: Ած. Anthropopoid—մարդանման կապիկ: Anthropolatry—մարդապաշտություն: Anthropopathism, -pathy—մարդակրություն, մոլորություն, որով ընծային Այ. մարդկային կիրք և այլն:

Սույն բառարանում բերված է 300 անգլերեն բառերի ուղղագրական բարեփոխության ցանկը, որը առաջադրվել է պրեզիդենտ Վուդրո Ռուզվելտի կողմից:

Դարավերջի անգլերեն բառարաններից է Պ. Թորոսյանի «Առձեռն ամերիկյան բառարանը»¹⁴, 25000 բառահոգովածով։ Բառարանն ունի գործնական բնույթ։ Ի տարբերություն նախորդ բառարանների՝ սրա նպատակն է եղել հատկապես օգտակար լինել ԱՄՆ-ում սփռված հայ աշխատավոր դասին։ Այդ իսկ պատճառով Պ. Թորոսյանի բառարանում բառերի ընտրությունը, արտասանությունը, նշանակություններն ու բացատրությունները համապատասխանում են հիշյալ խավերի մտավոր զարգացմանը։ Սա փաստորեն բառարան-միֆիմում է։ Բառարանում բացակայում են բացարձակ և թվական ածականները, դերանունները, շարթվա օրերը և տարվա ամիսները, որոնք արդեն կային հեղինակի կազմած «Ինքնուսուցիչ անգլիերեն լեզվի» մեջ, որոշ կենդանիների (օրինակ՝ կոզն, կառաժուղ, կոնքեղ, թոնձ) և որոշ բույսերի (օրինակ՝ ասպուռ, պատրինջ, շնավարունգ, շիկատակ, ատրոպ) անուններ, որոնք գործնական նշանակություն չունեն առօրյա կյանքում, գիտական որոշ բառեր հատկապես քիմիայի վերաբերյալ, ռամկաբանություններ։ Այս բոլորի փոխարեն Պ. Թորոսյանը իր բառարանում մտցրել է շատ նոր բառեր։ Օրինակ՝ megaphon, mimeograph, persona grata, Reichstag, Santa Claus, լուսավորչական եկեղեցու ծեսերին վերաբերող բառեր։ Օրինակ՝ mass, matin, paten, vesper, հեղափոխություն հետ առնչվող բառերը, որոնք դուրս են մնացել Կ. Պոլսում հրատարակված անգլերեն և հայերեն բառարաններից։ Օրինակ՝ revolution, socialism և այլն։

Հեղինակը նպատակահամար չի գտնում այս բառարանում շատ հոմանիշներ և փոխաբերական նշանակություններ բերել։ Քանի որ դա, նրա կարծիքով, կապակողմնորոշի օգտագործողին։ Բառարանում Պ. Թորոսյանը հանել է անգլերեն բառերի հնում գործածված և այժմ մեռած նշանակությունները (օրինակ՝ diploma, milliner, miss, nonography), իբր հայացած երրային, հունարեն և այլ օտար բառեր (օրինակ՝ դաբիթ, պղակունդ), հայերեն մեռած և անհամար բառերը (օրինակ՝ խամծեբ, խամուք, լաշկար, լկամ, ներկառ, ծնուցիչ)։ Բառարանում բացակայում են քերականական նշումները, որովհետև հեղինակի կարծիքով քերականություն գիտցողը ինքնուրույն կարող է այն տարբերակել։ Պ. Թորոսյանը երբեմն անգլերեն բառի նշանակությունն արտահայտող մեկ կամ երկու հայերեն բառերի փոխարեն տալիս է դրանց համառոտ բացատրությունը։ Օրինակ՝ Iambic — ոտանավորի հանգաչափ մը, որո մեն մի ոտքը կը բաղկանա երկու վանկերե, առաջինը՝ առանց շեշտի, վերջինը՝ շեշտված։

Հեղինակը բառի հոմանիշներն անջատել է ստորակետերով, տարբեր իմաստները՝ միջակետով։ Օրինակ՝ house — տուն, բնակարան, գերդաստան, ընտանիք. վաճառատուն։ Որոշ դեպքերում նա բերում է հայերեն համանշանակի ռամկական կամ էլ թուրքերեն (տաճկերեն) հոմանիշը, այդ հասարակ խավի համար բառիմաստն ավելի հստակ դարձնելու նպատակով։ Օրինակ՝ ilac — եղրկանի (տճկ. լեյլագ, ռամկ. զանգալագ)։ Kite — ցին (տճկ. շալլագ, ոմկ. առղան)։

Այս բառարանում բառերի նոր և առավել գործածական նշանակությունները դրված են սկզբում։ Օրինակ՝ bargain, platform, professor, insult, re-

¹⁴ Պ. Թորոսյան, Առձեռն ամերիկյան բառարան անգլիերեն-հայերեն, Նյու-Յորք, 1899.

gent, reject և այլ գլխարաններ: Դարձվածքներ բերված են եզակի դեպքերում: Օրինակ՝ look, put, run, out գլխարանների ապկ:

Բառարանի վերջում Պ. Թորոսյանը ներկայացրել է վերստերի «Հասարակ վարժարանաց» հատուկ բառարանից առնված կրճատումները և մի քանի շատ իր իսկ կազմած «Ինքնուսուցչից»:

Ամփոփելով մեր խոսքը XIX դ. լույս տեսած հայ-անգլերեն բառարանների մասին, նշենք, որ դրանք իրենց թերութուններով հանդերձ զգալիորեն նպաստեցին XX դ. հայ-անգլերեն բառարանագրության անուղղակի և զարգացմանը:

АРМЯНО-АНГЛИЙСКАЯ ЛЕКСИКОГРАФИЯ В XIX В.

ЛИЛИК ВАРТАНЯН

Резюме

Среди двуязычных словарей армянского языка достойное место занимают англо-армянские и армяно-английские словари, составленные в XIX в. Примечательно, что эти двуязычные словари были созданы в армянских колониях, общающихся с англоязычной средой. Первым англо-армянским словарем был словарь М. Симеоняна, изданный в Индии (г. Мадрас) в 1803 г. объемом в 5000 слов, представлявший чисто практический интерес.

Следующим словарем подобного типа, изданным в Венеции в 1821 г., был словарь А. Авгеряна. В отличие от предыдущего, этот словарь был создан на научных принципах и значительно превосходил его по своему объему. Этим же автором был создан первый армяно-английский словарь, изданный в 1825 г.

Последующие словари (англо-армянские) были изданы в 1825 г. в Калькутте (составитель — О. Авдалян) и в 1835 г. в Венеции С. Сомальяном. Им же был составлен армяно-английский словарь. Первый отраслевой словарь был составлен Е. Минасяном в 1865 г. в Константинополе (англо-армянский географический словарь и армяно-английский географический словарь). В 1875—79 гг. вышел в свет армяно-английский словарь М. Петросяна (г. Венеция). В 1894 г. был издан англо-армянский словарь В. Акопяна, выдержавший два издания (объем словаря 25000, 27000 слов). Последним словарем, изданным в XIX в., был словарь П. Торосяна. Он вышел в свет в Нью-Йорке в 1899 г. объемом в 25000 слов.